



ՀՀ Արմավիրի մարզպետարան

Մարզպետ՝ Աշոտ Ղահրամանյանին

Երևան, Հայաստան

Սեպտեմբերի 22, 2016թ. № 01 / 214

ԴԻՄՈՒՄ

(տեղեկատվություն ձեռք բերելու վերաբերյալ)

Հարգելի պարոն Աշոտ Ղահրամանյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության հոդված 27-րդ 2-րդ մասի՝ «Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք՝ ներառյալ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից»:


«Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը»: Եւ այն օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝

«Գրավոր հարցման պատասխանը տրվում է հետևյալ ժամկետներում.

- 1) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված չէ, ապա դրա պատճենը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում.
- 2) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված է, ապա տվյալ հրապարակման միջոցի, վայրի և ժամկետի մասին տեղեկությունը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում.
- 3) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները և տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը»:

Վերոնշյալ իրավական ակտերն հիմք ընդունելով,

Խնդրում եմ՝



Տրամադրել տեղեկատվություն ՀՀ Արմավիրի մարզի բյուջեից հասարակական կազմակերպություններին, հիմնադրամներին և հասարակական միավորումներին



տրամադրված ֆինանսական աջակցության մասին՝ տեղեկատվության տրամադրման մեջ հստակ նշելով՝

- Հասարակական կազմակերպությունների տվյալները, որոնց տրամադրվել է որևէ տեսակի ֆինանսական աջակցություն (անվանում, գրանցման վայր, ղեկավար անձի անուն ազգանուն):
- Ի՞նչ ծրագրերի շրջանակներում է տրամադրվել գումարները հասարակական կազմակերպություններին:
- Ո՞ր որոշումների հիման վրա են տրամադրվել հասարակական կազմակերպություններին ֆինանսական միջոցներ:
- Յուրաքանչյուր հասարակական կազմակերպությանը տրամադրված ֆինանսական միջոցների քանակական տվյալներ:
- Ֆինանսական աջակցություն տրամադրելուց հետո կատարվել են մշտադիտարկումներ, թե ոչ, եթե այո ապա արձանագրվել են արդյոք խախտումներ:

Հարգանքով՝

ՀԿ նախագահ՝

Սերգեյ Գաբրիելյան

Կատարեց՝ Ա. Մակարյան

+374 60 478989